

Դպրոցի հիմնադիրն արդէն բաւական
հաստատուն հիման վրայ դրած էր իր
դպրոցը, երբ 1885 թ. վերջնականա-
պէս հեռացաւ իւր «անջնորու օրրա-
նէն» սակայն դեռ մինչեւ այսօր
նա կը հսկէ իւր բոյնի վրայ, կը գուր-
գուրայ իւր ձագուկներու վրայ, եւ իր
հոգեկան աշէնուի վիճակին մէջ վեհ
հիմնադիրը որքան սփոփանք կ'զգայ,
երբ կը տեսնէ իւր փայտալած նախնու
հաստատու թեան յիսնակները, երբ կը
տեսնէ իւր շուրջը ստուար երամ մը
թեւաւոր եւ անթեւ ձագերու՝ երբ կը
տեսնէ ժողովրդական բուռն ոգեւորու-
թիւն մը իր դպրոցի շուրջ, Արգարես
Վարազայ դպրոցը իւր յիսնամեայ
կեանքի մէջ չստանալով ելուէջներ
ուսեցաւ, շատ փոթորիկներ անցուց-
իւր գլխէն, շատ խռչեղդոտներու հան-
դիպեցաւ, բայց երբէք չը մեղանչեց
իւր կոչումի դէմ, երբէք չը շեղեց իր
բուն նպատակէն, չէ՞ որ նա նշանաբա-
ռնէր «Ժողովրդով եւ Ժողովրդի հա-
մարշ» 25-՞ որ նա Ժողովրդի եւ օրուա-
անհրաժեշտ պահանջներուն զոհացու-
տալու նպատակով էր որ Ժառ-Երկ

րազորք-որբանոց վարժարաններու ֆա-
զերէն անցաւ. չէ որ այդ հանգաման-
քի շնորհիւն է որ այսօր կենսունա-
կութիւն ունի իւր մէջ:

Ահա թէ ինչո՞ւ այսօր վարազայ
դպրոցը բաց ճակատով հասարակութեան
կը ներկայանայ իր պատկառելի եւ
բեղմնաւոր կեանքի յիսնամեակին կրօ-
թնամ քաջալերութիւն կըստպատէ անկէ
նոր թափով մը իր երկրորդ յիսնամե-
ակը թեւակախելու նպատակով:

Հայրենակից,

Դուք, որ Զեր բարոյական ու նիւ-
թական աշակցութեամբ անցեալի մէջ
մղում տուած էք վարազայ դպրոցի
յառաջդիմութեան, դուք, որ ազնիւ
գործընթացով մը ջանացած էք անոր
յարատելութիւնը ապահովել, այս գե-
ղեցիկ առթիւ թոյլ տուէ՛ք անգամ
մը եւս ձեր մաքուր ոգեւորութեան,
փունջ մը հիւսեցէ՛ք այն պսակի հա-
մար, որով այս տարի պիտի պսակուին
վարազայ որբանոց-վարժարանը եւ իր
աղեկաւ հիմնադիր Հայոց սիրելի Հայ-
րիկը:

Վարազայ դպրոցը իր յորինանք կը
տօնէ այնպիսի ժամանակ մը, երբ ա-
նակնկալ իր գուռը բաղնիքներու թիւը
արագութեամբ կ'աճի, երբ սովորաւոր
վասպուրականը օրէցօր անգիծադրելի
պահանջներ կը ներկայացնէ իրեն լայն
բանալ իր դռները հարիւրաւոր սովոր-
ւոր եւ անսէրունջ մանուկ պատա-
նիներու առաջ:

Հայրենակից,

Մասնակցեցէ՛ք վարազայ դպրոցի
յորինանքին. մասնակցեցէ՛ք վարազայ
կրթութեան տան քաջալերութեան գե-
ղեցիկ ձեռնարկին: Ստեղծեցէ՛ք օտա-
րարնակ հայրենակիցներու եւ բնիկ
ազգակիցներու չըջանալի մէջ նոր եւ
մաքուր ոգեւորութիւն մը վարազայ
շուրջի:

Այդ կսպասէ ձեզմէ վարազայ զըպ-
րոցը:

Այդ կսպասեն ձեզմէ վարազայ 50
որբ սանիւր,

Այդ կսպասեն ձեզմէ վասպուրա-
կանի բաղնիքի սովորաւոր զաւակ-
ները:

Այդ կսպասէ ձեզմէ վասպուրականը,
Այդ կսպասէ ձեզմէ վարազայ զըպ-
րոցի վեհ հիմնադիրը:

Յարգանք

Տնօրէն-Ուսուցիչ վարազայ

Ժառ. Կարժարանի


Ա. ԴԱՐԲԻՆԵԱՆ

Յ Գ. — Ձեզ կը զրկենք նաեւ կոչ
մը ուղղուած տեղւոյ վառարարական-
ցի մը հայրենակիցներու, որոնց մա-
քուր ոգեւորութիւնը հրահրելու գե-
ղեցիկ գործը ձեզ կը թողունք:

ՆՈՅՆ

ՆԱԽԱՐԱՐԱՊԵՏ Տ. ԲԵԹԲՈՎԻ

ՍՊԱՆՄԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ



Սօֆիայի Զինուորական դատարա-
նին առջեւ այս ժամուտ տեղի կու տե-
նայ նախարարապետ Մ. Տ. Բէթբովի
սպանման դատավարութիւնը: Ատեա-
նին նախագահն է գնդապետ Թանէլ,
ընդհանուր գատախաղի պաշտօնը կը
վարէ հաղարապետ Պալաւանքի:

Ամբաստանները չորս հոգի են,
Ալէքսանտր Բէթբով որ նախարարը
սպաննել, Իվան Իքօնով որ Պալ-
քաւանքի թրիպուստ թերթին տնօրէնն
է, Վ. Հրանով նախկին պաշտօնեայ
Պուլ, Երկրագործական գրամատան եւ

Մ. Կէրով խմբագիր նոյն Պալքաւանքի
Թրիպուստ թերթին Ասոնց պաշտպան
փաստաբաններն են Մ. Մ. Ա. Ռա-
դէլ, Զլաթանով, Ֆատանչէթ, Ռէրով,
Կիրկինով եւ Ռաչօ Մաճարով: Գաղա-
քական մասը կը ներկայացնեն Մ. Մ.
Սափա Իվանչէլ, Թապուրնով եւ Ս.
Ռատէլ:

Առաջին նիստը բացուեցաւ չորեք-
շաբթի առաւօտ ժամը 8 1/2-ին Սօ-
ֆիայի Զինուորական դատարանին
սրահին մէջ: Նախագահը նախ հաստա-
տեց ամբաստաններու ինքնուրու-
թիւնը: Ալէքսանտր Բէթբով նախկին
պաշտօնեայ մըն է Վիտինի Պուլ, Երկ-
րագ. Դրամատան:

Իբր պաշտպան ներկայացող փա-
տարան Մ. Ա. Ռատէլին յայտարարեց
նախադէպ թէ զինք չընդունիր այն
դերին մէջ, քանի որ անիկայ լրագրաց
մէջ զեռ երէկ նամակ մը հրատարա-
կութեան տուած էր որով կանպատ-
ուէր ուղղակի Զինուորական Ատեանը
որուն վճիռը կանխաւ իսկ անարդար
կը հռչակէր:

Նախագահը ի մէջ այլոց յայտնեց
նաեւ թէ Մ. Ռատէլ դատի պիտի
կոչուի Զինուորական Ատեանին ղէմ
ըրած անարդարութիւն համար: Մ. Ռա-
տէլ ետ քաշուեցաւ այս միջադէպէն
յետոյ:

Այն ատեն կանչուեցան վկաները
որոնք հարիւրի մօտ են եւ որոնց մէջ
կան շատ մը նախարարներ:

Բէթբովի պաշտպան փաստաբանը
Մ. Մաճարով խօսք առաւ եւ պահան-
ջեց Դատարանէն բժշկական յանձնա-
խումբ մը կազմել հաստատելու համար
Բէթբովի մտային վիճակը զոր ինք
խանգարեալ կը չկատէ: Փաստաբանը
ըսաւ թէ անիկա զուրկ է իր անձին
նկատմամբ այն գիտակցութենէն թէ
մարդ մը կատարելագոյն ինք պատաս-
խանատու է իր գործերուն: Ընդհ.՝
գատախաղը պատասխանեց թէ այդ
պահանջը շատ ուշացած է, մանաւանդ
թէ բժշկական յանձնախումբ մը ար-
դէն քննած է տմբաստանեալը նախ-
նական քննութեանց ատեն, այդ յանձ-
նախումբը ոչ մէկ խանգարում գտաւ
Բէթբովին մտային վիճակին մէջ: Միւս
ամբաստաններու պաշտպաններն ալ
պնդեցին Մ. Զլաթանովի ահանջին
վրայ: Կէրով սխալ, որ փաստաբան
չէր ուզած, հակառակ միտք յայտնեց:
Ատեանը մերժեց Բէթբովին պաշտ-
պանին պահանջը, նկատելով թէ ամ-
բաստանեալին մտային վիճակը արդէն
քննուած է քննութեանց սկիզբէն եւ
թէ անկէ ի վեր ոչ մէկ զէպք չէ եկած
անոր վիճակը կասկածելի ընծայե-
լու:

Տեղակալ Սլավով սկսաւ ամբաստա-
նագիրը կարդալ որ ունէց մինչեւ
կէսօր: Նիստը ընդհատուեցաւ վերս-
կանելու համար ժամը 3 1/2-ին: Կէսօրէ
յետոյ նիստը յատկացաւ Բէթբովի
հարցաքննութեան: Մարդասպանը նախ
ինքզինք յանցաւոր ճանչցաւ, յետոյ
նախագահին հրահրին վրայ, պատմեց
ոճիրին պատմութիւնը իր ծննդավայր
Վիտինի սկսած պաշտօնանկ ըլլալու
օրէն ի վեր: Յիշեց Զայնք, Գուլա
եւ Նիշ (Սերպիա) երթալը Սօֆիա հաս-
նիլը: Վաճառականական եւ երկոտ-
գործական նախարար Մ. Կէնատիւնի
գիմելով պաշտօն ուղեւ, նախարար-
ներուն կողմէ պաշտօնին մէջ վերա-
հաստատուելու յոյսը, այն յոյսը որ,
երկու օր դիմումներ ընելէ յետոյ կը
մարէր, այն պարագաները որոնց մէջ
ծանօթութիւն ստացաւ Հրանովի հետ,
այն ճակատագրական աղբիւրները
զոր այս վերջինը ունեցած էր իր վը-
րայ, իր հանդիպումը Պալքաւանքի թրի-

պուստի տնօրէնին հետ, հանդիպում
պատրաստուած Հրանովին, Իքնուրու-
թիւն իր ուղղած հարցումները, ստա-
ցած պատասխանները որոնք զինք կը
քաջալերէին ոճիրը գործադրելու, ու-
ղեղէրի մը գնումը եւ վորձը: Այս
բոլոր պատմութիւնը ըրաւ ահա-
տանեալը հանդարտ ձայնով մը, առանց
յուզումի, մերթ ընդ մերթ -եղանակով
իր խօսքը առողջ շարժումով մը, իբր
թէ ստորագծելու համար ինչ ինչ նա-
խադատութիւններ:

Ամբաստանեալը այս նիստին մէջ
յայտարարեց թէ երկու անգամ Մ.
Կէնատիւնի առջեւ անցած է, յուս-
տալով միշտ թէ նախարարը իրեն նշան
մը պիտի ընէ իրեն իմացնելու թէ
հաճած է պաշտօն մը տալ: Այս պարա-
գային ինք բնաւ ոճիրի մը մասին չը
պիտի երազէր: Հետագայ մէկ նիստին
մէջ ամբաստանեալը պիտի ուրանար
իր այս յայտարարութիւնը: Բէթբով
վերջացող իր պատմութիւնը ընելով
թէ Մ. Մ. Բէթբով եւ Կէնատիւնի նա-
խարարներուն վրայ զէնք պարպած է
զանոնք սպաննելու նպատակաւ, բայց
ինք զէնք չէ պարպած ոչ զէպի Մ.
Սլավով եւ ոչ ալ Մ. Բայաջով նախա-
խարարներն որոնք կընկերանային
զոհին:

Յետոյ դատաւորները եւ փաստա-
բանները զանազան հարցումներ ուղ-
ղեցին ամբաստանեալին որ պատասխա-
նեց կարճ եւ ընդհանրապէս յստակ
նախադատութիւններով: Այս հարցում-
ներու նպատակն էր հաստատել Բէթ-
բովի մտային վիճակը: Այս վերջինը
ինքն իսկ յայտարարեց թէ ինք մտա-
յին բարեխառն եւ բնական վիճակի
մը մէջ ոճիրն զիմած է: Իր աղայու-
թեան մէջ զեռատի հարսի մը վրայ
զէնք քաշած եւ զանի թեթեւ կերպով
վիրաւորած էր հարսանեկան հանգէսին
մէջ ուր ինքը ներկայ էր:

Յետոյ կարդացած էր յամառաբար
անիլխանական պոռչիւրներ, որոնցմէ
ինք վարդապետութիւններ կընդունէր
յետոյ զայն լքանելու, բայց վերստին
ձեռք առնելու իր պաշտօնանկ ըլլա-
լէն յետոյ, ինք Սօֆիա եկած էր վրէժ
լուծելու բաղձանքով զթաղողութեան
պատճառներէ մէկէն յորում ինք ին-
կած էր Վիտինի մէջ իր անխելք ըն-
թացքին հետեւանքով: Նաեւ անիկայ
ի մէջ այլոց հոռանդաւ ընթերցող մըն
էր թերթերու եւ պլիւսարագէս «Պալ-
քանքայ թրիպուստ»-ին որուն յոդ-
ուածները Պուլկարիոյ կացութեան
մասին մեծ տպաւորութիւն մը կը գոր-
ծէին իր որոշումներուն վրայ: Հրանո-
ւորը՝ որ նոյնպէս պաշտօնանկ եղած
էր, անոր հանգիստեցաւ անանկ վայր-
կեանի մը յորում անիկայ վնասակար
գաղափարներէն տարուած էր եւ սա զա-
նի մղեր էր ծայրայեղութեան դիմելու:
Զանի համոզելը էր զուտ մարդասպա-
նութեան գաղափարին մէջ, Իքօնո-
ւորը ալ գլուխ հանեց էր, Հրանովի
սկսած գործը, ըսելով Բէթբովին թէ
իւրեքով մահը կացութիւնը պիտի
փրկէ:

Ամբաստանեալին հարցաքննութիւնը
շարունակուեցաւ հետեւեալ օրը հինգ-
շաբթի:

Բէթբովի պատասխանները այնչափ
յստակ չեն: Այնպէս կերեւալ թէ ինք
անիկարող է իր գաղափարները ամփո-
փել: Եւ կը թուէր որ իրեն վերագր-
ուած գործերը չէր ուզեր (կամ կրնար)
ըստինքն Յայտնուեցաւ թէ ինք կը
ջանար իր վրայ առնել բոլոր պատաս-
խանատուութիւնը եւ ազատել զանոնք
որ իրեն մեղաւորեցին կը նկատուէին:
Անիկայ շատ մը հակասութեանց մէջ
ինկաւ: Այսպէս, ուրացաւ սպանու-
թեան օրը պաշտօն մը ստանալու միտ-

քը, որուն գաղափարը, ըսաւ ինք,
զինք իրմօրիզե կընէր այն աստիճան
որ իրեն մոռցնել կուտար ուրիշ բոլոր
մտածումները: Սակայն այս նիստին
մէջ անիկ յստակօրէն արտայայտեց իր
յարաբերութեան բնոյթը Հրանովի
հետ: Այս վերջինն է որ ռումբ մը ու
զած է Սօֆիայի զինագործարանին
գործաւորներու պետ Պլասքովին,
ռումբ մը զոր Բէթբով կուզէր նետել
նախարարներուն վրայ Սօֆիայի ի
ժողովարանին մէջ ունկնդիրներու յա-
տուկ բարձր վերնատունէն: Այս Հրա-
նովն է որ, Պլասքովին ռումբը տալ
մերժելէն եւ նախարար Կէնատիւնի
պաշտօն մը տալ չուզելէն յետոյ, թե-
լադրած է Բէթբովը մարդասպանու-
թեան գաղափարին եւ որ անոր միջոց
ցոյց տուած է հարկ եղած դրամը հայ-
թայթելու վեցհարուածեայ մը գտու-
մին համար: Ան է որ զանի զրկած էր
Երկրագործ. Դրամատունը իր հաշուին
համար գերհաշիւ վճարում մը ուղղու-
ելու:

Կը յիշուի թէ սպանութեան վայր-
կեանին, երբ տեղակալ Գուլանիւնով
Բէթբովին վրայ քալեց, ասիկա սկսաւ
իր մտանքներուն մէջով սուրբ, Այս նշանի
մասին եղած հարցումին ամբաստա-
նալը պատասխանեց թէ վախցալ որ
սպան զիս տեղն ու տեղը կ'սպաննէ
եւ կերեւակայէի թէ ժողովուրդը՝ որ
կատէր նախարար Բէթբովը, ըստ իմ
կարգացած լրագրիներու վստահացու-
մին, ինձ օգնելու պիտի գար եւ զիս
պիտի ազատէր: Կը մտածէի նաեւ այն
բանին վրայ զոր Իքօնովով ինձ ըսած
էր, այսինքն պէտք չէ բնաւ հոգ ընել
այս գործին համար, եւ այդ պահուն
պոռացած է սարսափահար. «Դիտեցէ՛ք,
ժողովուրդը ազատելու համար զիս հոս
զրկեցին»:

ԲԱՅ ՆԱՄԱԿ

Առ Արժ. Մեքրուպ Բն. Մեքրուպեան
ՍՕՖԻԱ

Տեղւոյ հայ հասարակութեան միտ-
քերը այս պահուստ շատ գայթակղած են
ձեզի նկատմամբ:

Նիկողոս Համբերեանի, երկրորդ կեղծ
ամուսնութեան խնդրոյն առթիւ, տեղ-
ւոյ աղգանոց եւ Թաղ. Խորհրդին
կողմէ, «Իրաւունք»-ի 1906 տարւոյ
61 եւ 82 թիւերը ի ձեռն ունենալու
պէտք զգացուելով, որոց առաջինոյն
մէջ վերոյիշեալին նշանուած եւ երկ-
րորդին մէջ պատկուած ըլլալը յայ-
տարարուած էին, դուք խոստացեր էք
զանոնք գահել ուր որ կայ եւ օր
վերջը, այդ խնդրով զբաղողներէն, ձե-
ռումք Տիար Օ. Կի, 2 Ֆրանք վարձք
առնել վերջ, երկու թերթեր յանձ-
նել էք, ըսելով թէ, գտած էք այդ
թիւերը մէկու մը քով բայց 2 Ֆր. էն
պակաս վարձքով չտար: Երեւի այդ 2
Ֆրանքին փայլը այն աստիճան չլա-
ցուցեր է ձեր աչքերը որ, թերթերուն
ճակատը փակցուած ձեր տպեալ անու-
նը չէք տեսներ, որով իրողութիւնը
Թաղ. Խորհրդոյ մէկ նիստին մէջ ե-
րեւան եղած է, նոյնիսկ ձեր ներկա-
յութեան:

Նաեւ յիշեալ Համբերեանի կողմէ
այլեւս չենթիքներով Պօլէն իր-
ուած, խաբուած եւ քանիցս փողոց
ձգուած հայ աղջիկը որ վերջին անգա-
մուն Թաղ. Խորհրդոյ կողմէ ձեզի
յանձնուած էր ց'կարգադրութիւն խնդ-
րոյն դուք նախապէս համաձայնելով
Համբերեանի հետ եւ հակառակ Թաղ.
Խորհրդոյ պահանջին, որ մէկ զրիւր
եւս պահէք աղջիկը եւ օրինակեալ
կարգադրութենէ եւ այս վերջնոյն ա-
պագան ապահովելէ վերջը միայն յանձ-

նուրի գուք, տէր հայր, յանձնած էք Համբերեանի ինչ որ Թագ. խորհրդով կողմէ անգի աւանդ ձգուած էր, որ պէս զի չի շարունակէ «իր քմահաճ գուարճութիւնը յագեցնել», ձեր գրչէն իսկ ելած բառերով:

Աստուծոյ պաշտօնէի մը համար, եւ, արծաթապաշտութիւն կը բուրնէ, ինչ որ աններելի է քահանայի մը, Աստուծոյ պաշտօնէի մը համար:

Բայց զժողովար է մեզ հաւատալ որ, մինչդեռ ամբողջ Սօֆիայի հայ հասարակութիւնը, ինչպէս նաեւ Թագ. խորհուրդը, վերջին ծայր յուզուած Նիկոզոս Համբերեանի խնդրով, ամեն տեսակ նիւթական եւ բարոյական զոհողութիւն ընելու պատրաստ են, զրկեալի մը իրաւունքը պաշտպանելու համար, զուգ ելնէք եւ գործը շահագործելու ուղիք:

Այո, հայ քահանայի մը, մանաւանդ ձեզի համար, այս տեսակ արարք ընաւ հաւատալիս չի գար, ուստի, իրաւ ժողովի գալիս կողմի մտաց, փութացէք ձեր վրայ ծանրացած ամբաստանութիւնը հրապարակաւ հերքելու, որով միայն պիտի կրնաք այսուհետեւ բաց եւ բարձր ճակատով հայ հասարակութեան ներկայանալ:

Ստորագրութիւնք
Եօրը Ժանօր ազգայնոց

ՎՐԻՊԱԿ

Հայ Ուսուցչական Մարմնոյն կողմէ Վառնայի Ազգ. վարժարանաց Հոգաբարձութեան ուղղեալ «Բաց նամակ»-ին — զոր հրատարակեցինք մեր նախորդ թուով — առաջին տողին «Մեծ ուրախութեամբ կարգացինք» խօսքը «Մեծ տխրութեամբ կարգացինք» պիտի ըլլայ:

Գրաչարներէն միոյն անուշադրութեամբ ըրած այս սխալը՝ «ըբարձրութեան ատեն մեր ալ մտադրաւ մէկ վայրկեանին հանդիպելով, ուշադրութենէ վրիպեմք էր»:

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

84

ԱՒԱԶԱԿԱՊԵՏԸ



ՄԱՍՆ ԶՈՐՐՈՐԴ

ԿԱՍԱԶԱՆԸ

(Շար. նախորդ թիւէն)

Դատաւորները չը շարունակեցին այդ հրապարակային դատը: Բայց ոտքի չելած՝ ահա ներս մտաւ արդարութեան ընդհ. դատաւարը ու յանցաւորին հետեւեալ հարցումն ըրաւ.

— Օրէնքը կը տրամադրէ որ ճշմարտութիւնը խոստովանիս: Ըսէ, ի՞նչ պատճառներէ թելադրուած աւագակային խումբ մը կազմակերպելու չար խորհուրդն ունեցար...: Ի՞նչ արկէ տեղէ մը դրդուեցար, անանկ չէ՞: Պարտական ես յայտնելու:

— Արեւնը՝ արիւնի տեղ... չեղտեց վարդով:

- Ո՞վ է քու ամենիդ խմորը:
- Կառավարութեան մարդը:
- Ըսէ, աղատ ես:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Հայկական խնդիրը Հաճէի Համաժողովին ներկայացնելու համար Վառնայի, Ֆիլիպպի եւ ուրիշ մէկ քանի քաղաքներու Հայոց կողմէ հեռագիրներ ուղղուեցան Մ. Բիէն Բիյառին:

Մեր նախորդ թուերով չուղեցինք այս լուրը հրապարակ հանելու, ըստ մեզ շատ բանաւոր պատճառով մը, բայց հայ պաշտօնակից մը արդէն այդ ըրած ըլլալով մենք ալ ստիպուեցանք գէթ անցողակի յիշել հոս:

Նաեւ մենք կարծիք յայտնած էինք որ հայկական խնդիրը միջազգային համաժողովին ներկայացնող պատուիրակութեան մէջ հայ անդամ մըն ալ գտնուի, գէթ մեր ազգային արժանապատութեան եւ պատշաճութեան դէմ մեղանշած ըլլալու համար. Բարիզի մէջ միթէ մէկէ աւելի կարող հայեր չէ՞ին գտնուէր Մ. Բիյառին ընկերանալու համար:

— Մշակի վերջին յայտարարութիւնը ստացանք, ուր կարգ մը հայ թերթերու գաղարման գլխաւոր պատճառ ցոյց կը տրուի «Հերմէս» ապարանին կառավարութեան կողմէ գոցուելը: Մշակի խմբագրութիւնը այս առթիւ թերթին նիւթապէս անձուկ վիճակն ալ հրապարակ կը դնէ, որ մեզ թէ՛ զարմանք եւ թէ ցաւ պատճառեց:

— Կէտիք փաշայի (Կ. Պոլիս) եկեղեցւոյն քարոզիչ կարգուեր է Վահան վրդ. Յակոբեան:

Պատրիարքարանը չը կրցաւ վերջապէս ու եւ վիճակի առաջնորդ ընտրել տալ այդ շնորհաւոր:

— Կուգէ՞ք մանրամասնօրէն տեղեկանալ:

— Այո՛:

— Լաւ. ուրեմն մտիկ ըրէ՛ք: «Կառավարութեան հաւատարիմ անձ մը տարիներով կապրէր հաճեալ ընտանիքի մը մէջ: Օր մը այդ հաւատարիմ անձը հարազատ քրոջ հետ մօտակայ քաղաքէ մը կը վերադառնար: Ծածկան իրեն կը հանդիպին ձիւ, որ ոտիկաններու ջուկատ մը եւ Կ. Պոլիսէն եկած զինուորական հազարապետ մը: Այդ հանդիպման վայրը լեռնային վայր մըն էր, Հոն չարագործ մը երկու բանէ կրնար վախալ. Աստուծոյն ու իր խղճէն: Հազարապետը կը կեցունէ ոտիկաններու ջուկատը եւ կը հրամայէ ճամբորդ անձին որ իր քողը մօտենայ, Թշուառ մարդը կը մօտենայ, — Ո՞վ է հետինք, կը հարցունէ հազարապետը: — Գոյրս է, կը պատասխանէ մարդը: — Սուտ կը խօսիս, կը պօռայ հազարապետն ու կապի կուտայ մարմը: Յետոյ մանկամարդ աղջիկը կը քաշէ ժայռի մը ներքեւ... ու եղբօր աչքին հանդէպ կը բռնաբարէ գոյն: Ու ինքը յափրացած՝ կը հետանայ քառորդի մը չափ եւ կը հրամայէ ոտիկաններուն էր կեալուրի ազգական քեֆը կատարեն: Ոտիկանները կը լլկեն ու զիակ կը դարձունեն զանի... Եր-

նակ վերադառնորդ, ոչ ալ Ռուսա-նիա կրցաւ զրկել, ու ստիպուեցաւ զանի իր քթին տակ պահել: Բարի վայրում կէտիկ փաշացիներուն, որոնց նախորդ քարոզիչն ալ Տաճատ վրդ. արժանաւոր իր յաջորդին, անցեալ օր կրօն. ժողովին որոշմամբ, հրաժարեցուցուեցաւ քարոզչական պաշտօնէն եւ անունը շնորհեցաւ առաջնորդական ընտրելեաց ցանկէն: Այժմ Տաճատին տեղ Վահան վարդապետ: «Յետինը չար քան զառաջինն»:

— Սէվէրէկէն 30 տունի չափ Ասորիներ փափաք յայտնեւ եւ Տիգրանակերտի հայոց Առաջնորդին Հայ եկեղեցին ընդունելու, պայմանաւ որ Սէվէրէկի մէջ յատուկ մատուռ մը ունենան իրենք աղօթելու համար ասորերէն լեզուաւ՝ ըստ ծիսի հայ եկեղեցւոյ:

— Մաթոս էֆ. Ունճեան գրաւոր կերպով վերջնականապէս հրաժարեցաւ Արմաշու դպրեմանքին խնամակալութեան պաշտօնէն: Իր նպաստներն ալ դադարեցուցած է, ցաւ զգալով որ դպրեմանքին համար իրենց այնչափ զոհողութիւնները աւելի անբարեխիղճ վարդապետներ հասցնելու ծառայեցին:

— Ամէրիկայի հայ զինավարժական խումբերը Փրովիտէնսի մէջ պատգամաւորական ժողով մը գումարելով ի մէջ այլոց հետեւեալ որոշումները տուեւ են.

- 1) Միացեալ խումբերու անունը պիտի ըլլայ «Հայ Զինուորական Միութիւն»:
- 2) Նպատակը. Ամերիկահայ ժողովրդին մէջ զարգացնել զինավարժութիւնը:
- 3) Հայ մարզիչներ պատրաստել:
- 4) Ուր որ զինուորական խումբ

ժամէն կը մեռնի աղջիկը: Եւ սրպէսզի եղբայրը մէկու մը չը յայտնէ, անոր ալ կուրծքին քանի մը դաշոյնի հար. ուսման կուտան եւ կը մեկնին, կարծելով որ մեռած է: Բայց մեռած չէր: Քանի մը ժամէն աչքի կուգայ ու կազատուի: Մարդը տունը չը վեճադառնար... իր առաջին պարտականութիւնը կը ըլլայ այդ հազարապետը յոշտել... կը հասնի նպատակին: Ըսել կուգեմ թէ՛ իր վրէժը կը լուծէ...:

— Ո՞վ է այդ անձը, ընդհանրեց ընդհ. դատաւարը չը հասկնայ ձեռագրելով:
— Ե՛ս եմ... բացազանջեց Վարդով:
— Դո՛ւն:
— Այո:

Ընդհանուր դատաւարն երկիւղալի նայուածք մը նետեց չորս զին ու դատաւորներուն հետ գաղտնի գիւնաւ տունը մտան:

Յետոյ վերադարձան... ու ահա ինչ որ վճռեցին.

«Նկատելով որ յիշեալ Աւագ Լիւնեց անուն անձը վաղեմի եղբունազործներէն մին է եւ աւագակութեամբ կապրի, օրինաց սրամազորութեան համաձայն՝

Մահուան կը դատաւարտուի...»
Սոյն մահովճիւղին ընթերցումէն հետք վարդով ոտիկաններու առաջնորդութեամբ բանտը տարուեցաւ:

բեր չկան կազմել՝ և եղածները միացնել:

5) Հայ Զինուոր. Միութիւնը ու եւ կուսակցութենէ անկախ պահել:

6) Վառդապետի տօնին առթիւ Միութեան տարեգարձը տօնել զօրահանգէսով մը:

7) Գործ. մարմին մը և Կեդր. վարչութիւն ունենալ որոնք վարեն գործերը մէկ տարի:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Մ. ՍՈՒՐԵՆ — Կիրակի օրուան առաջին օրուան ժամին ձեր գրութիւնը յաջորդեալ:

ԿԸ ՓՆՏՈՒՈՒԻ

Օննիկ Ռափայէլեան, Պոլսեցի, քարագործ աղորիկի, որը այժմ կը գտնուի Պուլկարիոյ մէջ, Հասցէն գիտցողներէն կը խնդրուի իմացունել Մ. Գեղորգ Այվազեանի, ճաշարան «Սաէտիներին» ՍՈՑԻԱԼ

ԾԱԽՈՒԻ ԳԻՐԳԵՐ

ԹԻՒՂԱՐՏ Ա. հատոր (162 էջ) 1 ֆր. Բ. » [433 էջ] 2 ֆր. ՆՈՒ ԵՐԿԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՆԶ ՀԱՅԿԱԿԱՆ երկրորդ անգամ տպագրուած եւ ճոխացած. Գին 1 ֆր.

ՆԵՏԱ Կը պատկերացնէ Պուլկարներու նիստ ու կացը ու թուրքերէ կրած տառապանքը անոնց ազատութենէն առաջ. Գին 50 սանգիմ

ՀԱՅԻՆԵՐԻ ԶԱՔԵՐ Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեանքէն: Զեղչեալ գին 1 ֆր.

Այս գրքերը ստանալու համար դիմել Վ.Ս.Ն.Ս. «Իրաւունք»-ի խմբագրութեան

Բազմութիւնը սրահէն մեկնեցաւ դռնն ու սարսուղի տպաւորութեան մը տակ:

Անցաւ չաքաթ մը... Կ. Պոլսէն եկած հրամանագիր մը, որ վաւերացուած էր կայսերական իւրաւեցով, թոյլ կուտար եղբունադատ ատեանին որ ընդհուպ կախաղանի բարձրացունէր չարագործը:

Իրդ, հրապարակային յայտարարութիւն մը տարածուեցաւ, որուն մէջ նշանակուած էր կախաղանի պատիժին օրն ու ժամը. մանաւանդ վայրը:

Աւագակապետը նոյն օրը ներկայ գտնուեցաւ:

Բազմութիւնը նկարագրելու բան չէր... սակայն ճիշտ ժամանակին յանկարծ ոտիկաններու խումբ մը նետուեցաւ բազմութեան մէջ և զայն ցրուել ուղեց:

Ժողովուրդը հասկցաւ թէ կախաղանի որոշումը յետաձգուած էր:

Մինչդեռ օր մը եաքը ստոյգ աղբիւրէ մը լուր առնուեցաւ թէ մահապարտ ժամ մը առաջ ազդու թոյն մը առած ու բանտին մէջ մեռած էր:

Աւագակապետը ձեռքը կուրծքին վրայ դնելով մրմնջեց.

— ՎՐԷ՛ժ...:

ՎԵՐԶ ԶՈՐՐՈՐԴ ՄԱՍՆ

ቅኅተሰዊት

Բ ՈՒՄՆԵՐԱ

ფრანგული.

2168 ԳԼԹԼԸ Խ

ԼԱՀԻՑ ԳՕՆՖԵՐԱՆՈՐ

Պէյն եւ միլէլ իրիշաֆը

- 1) Գեորգիան-Աստորիա ՂԷ Ի-
սլիա Իթթիֆագր:
- 2) Րուս-Ֆրանսիզ Իթթիֆագը
- 3) Ինկիլիզ Ճաբոն Իթթիֆագը

ԾԱԽՈՒ ՏՈՒՆ ԵՒ ԱՅԴԻ

Դնել փափաղողներ բնան զիմել
նոյն տունը ուր կը բնակի տանտէրը

4—3

Издатель: Д-ръ М. Торосиянъ


печатница Д. Тодоровъ С-не — Варна



ՀԱՅԿԱԳԻՏՈՒՄ

ԿՐԿՐՕՖՈՆԻ ՀԱՅԵՐԷՆ

Φ Λ Ψ Ω Ε Ρ



Լոյս տեսաւ մեր նոր ցուցակը հայերէն՝ Կրամօֆօնի
բլաքաներու Փափաքողաց կը զրկենք ձրի 80 կտորէ աւելի
զանազան հայերէն եղանակներ տմենաառաջնակարգ «Կրա-
մօֆօն Ընկեր» ֆապրիքէն, «Գրող Հրեշտակ» մարքայով,
Ամենադիմացկունը բոլոր գոյութիւն ունեցող բլաքաներէն,
Ընտիր Կրամօֆօններ մատչելի գներով երեք տարի ե-
րայսաւորութեամբ:

Ն. ԱԼԵԱՆԻՔ Է ԻՒ ԾԵՐՈՒՆԵԱՆ

Գործարան Հեծերանիշի ՊՐՕԿՐԵՍ⁶⁶ — ՌՈՒՍՃՈՒԲ